ԱՄԱՆՈՐԻ ԵՎ Ս. ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՂ ԱՆԴԱՄ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՎԱՀԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՈՍՏԱՆՅԱՆԻ ԱՆՈՒՆՈՎ ԹԵՄԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԲԵՅՐՈՒԹԻՑ

Ամանորի և Ս. Ծննդյան տոներուն առթիվ Կաթողիկոսարանի անունով կմատուցանենք լավագույն մաղթանքներ և շնորհավորություններ:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ՝
ԽԱՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՋԱՊԱՀՃԱՆ

ԵՐՈՒՍԱՂԵՄԻՑ

Նոր տարվա և Ծննդյան տոների առթիվ ներկայացնում ենք Ձերդ սրբազնության և Դերագույն Հոգևոր Խորհրդի անդամներին մեր ջերմ շնորհավորությունները: Աղոթում ենք մեր փառապանծ եկեղեցու ավելի մեծ նվաճումների համար:

ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ՝
ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻՑ

Ամանորի և Ս. Ծննդյան առիթով շնորհավորանք և մաղթանքներ Մայր Աթոռ պայծառացման համար:

ՊԱՏՐԻԱՐՔ ԹՅՈՒՐՔԻՈ ՀԱՅՈՑ՝
ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆՅՈՒ-ՅՈՐՔԻՑ

Ամանորի և Ս. Ծննդյան առթիվ ընդունեցեք իմ և առաջնորդարանիս տեսուչ մարմինների, հոգևորական դասու և ծուխերու ջերմագին մաղթանքները՝ Ձերդ սրբազնության, Դերագույն Հոգևոր Խորհրդի, Մայր Աթոռի և Հայրենիքի բարօրության և անսասանության:

Առաջնորդ Հյուսիսային Ամերիկայի հայոց՝
ՄԱՄԲՐԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՖԱՅԱՆ

ԼԵՆԻՆԱԿԱՆԻՑ

Լենինականի Ս. Աստվածածին եկեղեցու քահանայական դասը, բեմական խորհուրդը, հավատացյալները և անձամբ ես շնորհավորում ենք Ձերդ սրբազնության, Դերագույն Հոգևոր Խորհրդի անդամներին և Ս. Էջմիածնի բոլոր միաբանության նոր տարին և Քրիստոսի Ծննդյան սուրբ տոնը: Սրտագին ցանկություններով մաղթում ենք Բարձրյալին՝ որ տա աշխարհին խաղաղություն, Մայր Աթոռին՝ անսասանություն և Ձերդ սրբազնության՝ երկար կյանք և առողջություն:

Առաջնորդ Ճիրակի թեմի՝
ՍՈՒՐԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԹՈՐՈՍՅԱՆ

ԹԲԻԼԻՍԻՑ

Նոր տարվա և Ծննդյան առաջիկա տոները՝ ոգեշնչում են մեզ բոլորիս, որովհետև ամբողջ հավատացյալ ժողովուրդը ցնծությամբ է նշանավորում այդ տոները: Ցանկանում ենք Մայր Աթոռ Էջմիածնին անսասանություն, խաղաղություն ժողովուրդներին, խաղաղություն ամբողջ աշխարհում: Անձամբ Ձեզ ցանկանում ենք առողջություն և երկար կյանք:

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԿԱՀԻՐԵԻՑ

Ամանորի և Ս. Ծննդյան տոներուն առթիվ շնորհավորություններ և շատ անկեղծ մաղթանքներ Ս. Աթոռոն պայծառության, անսասանության և Մայր Հայրենիքի բարգավաճման համար:

Առաջնորդ Եգիպտահայ թեմի՝
ՄԱՄԲՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԻՐՈՒՆՅԱՆ

ԲՈՒԵՆՈՍ-ԱՅՐԵՍԻՑ

Շնորհավորելով ամանորը և Ս. Ծնունդը, կմաղթենք, որ Տերը շուտով վերցնե սև շղարշը Հայրապետական Աթոռի վրայեն:

Հայրապետական պատվիրակ Հարավային Ամերիկայի հայոց՝
ՍԻՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՓԱՐԻԶԻՑ

Ամանորի և Ծննդյան տոներու առթիվ կմատուցանենք ես, նույնպես եկեղեցական խորհուրդը և հավատացյալները՝ ջերմագին շնորհավորություններ, լավագույն ցանկություններ, հարգալիր մեծարանք:

Հայրապետական պատվիրակ Եվրոպայի թեմի՝
ՍԵՐՈՎԲԵ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ,
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՖՐԵԶՆՈՑԻՑ

Նոր տարվան և Ս. Ծննդյան տոներու առթիվ կոտարկենք մեր շնորհավորությունները, մաղթելով աշխարհին խաղաղություն, Մայր Աթոռոն՝ հաստատություն և արժանընտիր նոր Դահակալ:

Առաջնորդ Կալիֆորնիոյ թեմի՝
ՇՆՈՐՀՔ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱԼՍՏՅԱՆ

ԲԱՔՎԻՑ

Եկեղեցական խորհուրդը, հոգևորականությունը, հավատացյալները և անձամբ ես շնորհավորում ենք Ձեր նոր տարին և Քրիստոսի Ծնունդը: Ցանկանում ենք Ձեզ առողջություն, երկար և երջանիկ կյանք՝ ի բարօրություն Հայ եկեղեցու և հավատացյալների:

Ադրբեջանի հայոց թեմի առաջնորդ՝
ԳԱՐԵԳԻՆ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ՌՈՍՏՈՎԻՑ

Շնորհավորում եմ Ձեր նոր տարին: Ցանկանում եմ առողջություն և երկար կյանք Ձեզ և Դեռագույն Հոգևոր Խորհրդի բոլոր անդամներին:

ՎԱՐԴԱՆ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ՄԻԼԱՆԻՑ

Շնորհավոր ամանոր, Ս. Ծնունդ: Խաղաղ բարգավաճում Մայր Աթոռին և Հայրենիքին:

ԶԳՈՆ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱԹԵՆՔԻՑ

Ամանորի և Ս. Ծննդյան տոնի առթիվ հանուն գաղութիս կնայտնենք ջերմագին շնորհավորություններ, մաղթելով արևշատություն և Ս. Աթոռին՝ արժանավոր Դահակալի մը արժանացում:

ՀԱՅՐ ՆԵՐՍԵՍ ԽՈՇՈՐՅԱՆ

ԹԵՀԵՐԱՆԻՑ

Լավագույն մաղթանքներով շնորհավորում ենք ամանորի և Ս. Ծննդյան ու Մկրտության տոները:

ՔԱՀԱՆԱՅԻՑ ԴԱՍ,
ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ,
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԹԵՀԵՐԱՆԻՑ

Սրտանց շնորհավորում եմ Սրբազնությանդ, Դեռագույն Հոգևոր Խորհրդի և միաբանության նոր տարին, Ծննդյան և Մկրտության տոները: Ցանկանում եմ կատարյալ առողջություն և հաջողություն:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՀԱՋՅԱՆ

ԹԱՎՐԻԶԻՑ

Ատրպատականի հայոց թեմական ժողովը, թեմական խորհուրդը, քահանայից դասը և համայն ժողովուրդը համբուրելով Ձեր Ս. Աջը, շնորհավորում ենք և՛ Դեռագույն Հոգևոր Խորհրդի և՛ ողջ միաբանության նոր տարին և Ս. Փրկչի Ծննդյան տոները, մաղթելով՝ որ Տերը վերացնե սև Բողը Հայրապետական Աթոռից, պարգևելով արժանավոր հաջորդ՝ ի հարատևություն և ի պայծառություն Ս. Էջմիածնի:

Առաջնորդական տեղապահ՝
ԿԱՐԱՊԵՏ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ

ԲԱՂԴԱԴԻՑ

Մեր հայոց համայնքի հետ միասին շնորհավորում ենք Ձեր նոր տարին և Քրիստոսի հրաշափառ Ծնունդը: Մաղթում ենք Հայոց Եկեղեցուն և Գերագույն Հոգևոր Խորհրդին անսասանություն:

Առաջնորդական տեղապահ՝
ԳՐԻԳՈՐ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆ

ԿԱԼԿԱԹԱՅԻՑ

Մեր համայնքը շնորհակալությամբ ծանոթացավ Ձեր բարյացակամ քաջալերական պատգամին: Փոխադարձաբար ի սրտե անկեղծորեն մաղթում ենք Մայր Աթոռին և միաբանության՝ անսասանություն, բարօրություն, երկարակեցություն:

ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԲՈՒԽԱՐԵՍՏԻՑ

Նոր տարվա առթիվ հարգալիր շնորհավորություններ կմատուցանենք Ձեզ և կմաղթենք անսասանություն Մայր Աթոռին և խաղաղ ծաղկում մեր հարազատ Սովետական Հայրենիքին:

Ռումինահայ թեմական խորհրդի նախագահներ՝
ՎԱՀԱՆ ԴԱՆԻԵԼՅԱՆ,
ԴՈԿՏՈՐ ԳՐԻԳՈՐ ԲԱՄԲՈՒԿՋՅԱՆ

ՍՈՖԻԱՅԻՑ

Նոր տարվա և Ս. Ծնունդի առթիվ ուղիղական ջերմ ողջույններ բուլղարահայ հավատացյալների անունից:

ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԵՐԵՎԱՆԻՑ

Շնորհավոր Ձեր և միաբանության նոր տարին: Ցանկանում ենք, որ նա բերե համայն աշխարհին խաղաղություն և Հայրենյաց ու Ձեր բոլոր գործերին հաջողություն:

Ս. ԶՈՐԱՎԱՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՔԱՀԱՆԱՅԻՑ ԴԱՍ,
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
ԵՎ ՀԱՎԱՏԱՑՅԱԼ ԺՈՂՈՎՈՒՐԴ

ԵՐԵՎԱՆԻՑ

Ս. Հովհաննես եկեղեցու քահանաները, եկեղեցական խորհրդի անդամները և հավատացյալները շնորհավորում են նոր տարին, Քրիստոսի Ծնունդը և Հայտնությունը:

ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻՑ

Ընդունեցեք նոր տարվա և Ս. Ծննդյան սրտագին շնորհավորանքս և որդիական խոնարհ հարգանքներս:

ՏԱՃԱՏ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՏԵՐ-ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻՑ

Առողջության և հաջողության ջերմ մաղթանքներով շնորհավորում եմ Ձեր նոր տարին և Ս. Ծնունդը:

ՍԱՐԳԻՍ ՔԱՀԱՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻՑ

Շնորհավորելով Ձեր, Գերագույն Հոգևոր խորհրդի անդամների և միաբանության անդամների նոր տարին, Հիսուսի Ծննդյան և Մկրտության տոները, ցանկանում եմ բոլորիդ առողջություն և հաջողություն:

ՍՏԵՓԱՆ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ

ՄՈՍԿՎԱՅԻՑ

Քրիստոսի Ծննդյան մեծասքանչ տոնի առթիվ շնորհավորում ենք Ձեզ Գերագույն Հոգևոր խորհրդի անդամներին և Ս. Էջմիածնի բոլոր միաբաններին: Ցանկանում ենք Ձեզ բոլորիդ երկար տարիներ, բարեհաջողություն և առողջություն:

ՊԱՐԵՎ ԱԲԵՂԱ ԳԵՈՐԳՅԱՆ,
ՎԱՀԱՆ ԱԲԵՂԱ ԴԱԼԱՄԴԱՐՅԱՆ,
ՀԱՅՐԻԿ ԱԲԵՂԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ,
ԽԱՉԱՏՈՒՐ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՏԵՐ-ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԵՆԻՆԱԿԱՆԻՑ

Բարի ցանկություններով շնորհավորում եմ Ձեր նոր տարին և Քրիստոսի Ծնունդը: Ցանկանում եմ Ձեզ երկար կյանք և առողջություն:

ՆՈՐԱՅՐ ՔԱՀԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ԿԻՐՈՎԱԿԱՆԻՑ

Շնորհավորում եմ Քրիստոսի Ս. Ծննդյան և Հայտնության տոնը և աղերսում եմ, որ Ամենակալը պարգևե Ձեզ երկար կյանք և առողջություն, և բարություն՝ Հայաստանյայց Ս. Եկեղեցուն:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՔԱՀԱՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆՑ

ԿԻՐՈՎԱԿԱՆԻՑ

Կիրովականի Ս. Աստվածածին եկեղեցու հավատացյալները և քահանայից դասը շնորհավորում են Ձեր նոր տարին, Ս. Քրիստի Ծնունդը և Մկրտությունը: Ձեզ հետ միասին մենք էլ կրկնում ենք հրեշտակների այն ներդաշնակ երգի սա բառերը՝ «Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

ՔԱՀԱՆԱ ՏԵՐ-ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԲԱՔՎԻՑ

Շնորհավորում եմ Ձեր նոր տարին: Ցանկանում եմ Ձեզ առողջություն՝ ի բարություն Հայոց Եկեղեցու:

ՆԱՎԱՍԱՐԴ ՔԱՀԱՆԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԱՍՏՐԱԽԱՆԻՑ

Շնորհավորում եմ Ձեր նոր տարին և Քրիստոսի Ծնունդը: Աղոթում եմ Աստուծուն Ձեր առողջության և երկարակեցության համար:

ԱՐՏԱՇԵՍ ՔԱՀԱՆԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԹԵՀՐԱՆԻՑ

Փոխադարձաբար սրտագին շնորհավորում եմ Ձեզ Ծննդյան և Մկրտության տոների առթիվ: Շատ շնորհակալ եմ Ձեր ուշադրության և մաղթանքների համար: Աղոթում եմ Աստուծուն՝ էջմիածնին տա բարգավաճում, երջանկություն, և բոլոր նրանց, որոնք սրտով ուզում են, Աստված պարգևի բարություն, խաղաղություն բոլոր քրիստոնյա եղբայրների համար:

ՌՈՄԱՆ ԵՍԱՅԱՆ

ԲԱՔՎԻՑ

Շնորհավորում եմ Ձեր նոր տարին: Ցանկանում եմ Ձեզ առողջություն և երկար կյանք:

ԽՈՐԵՆ ՊԱՎՅԱՆ

ՂԶԼԱՐԻՑ

Շնորհավորում եմ Ձեր նոր տարին և Քրիստոսի Ծնունդը:

ԽԱՉԱՏՐՅԱՆ